# 13-ԱՄՅԱ ԿԱՐԵՆԸ ՄԻՆՉԵՎ 18 ՏԱՐԵԿԱՆԵՐԻ ՉԵՄՊԻՈՆ

Մի քանի օր առաջ Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի կենտրոնական տանը ավարտվեց մինչև 14 և մինչև 18 տարեկան պատանիների շախմատի Հայաստանի առաջնությունը, որտեղ վիճարկվում էին նաև աշխարհի ու Եվրոպայի պատանեկան առաջնությունների ուղեգրերը:

Ընթանում էր հերթական տուրը: Մարգասերները անթաքույց հիացմունքով հետևում էին ավագ տարիքային խմբի ամենակրտսեր մասնակցի՝ 13-ամյա Կարեն Ասրյանի խաղին: Նուրբ դիմագծերով, լուրջ ու խոհուն հայացքով պատանին չընկրկեց տարիքով իրենից մեծ շախմատիստների շրջապատում և մեկը մյուսի ետևից պարտության մատնեց վիճակահանության քմահաճույքով իրեն բաժին հասած բոլոր մրցակիցներին: Ի վերջո, բացառիկ բարձր արդյունքով՝ 9 հնարավորից 8 միավորով, նա գրավեց առաջին տեղը, դառնալով մինչև 18 տարեկան պատանիների Հայաստանի չեմպիոն: Սա աննախադեպ նվաճում է:

Շախմատի հետ Կարենը ծանոթացել է չորս տարեկան հասակում: Վեց տարեկանից հանդես է եկել շախմատային որակավորման մրցումներում և արդեն հաջորդ տարի լրացրել է մարզական առաջին կարգի նորման:

1990 թվականին, երբ տակավին չէր բոլորել տասը տարին, Կարենը Լենինգրադում մասնակցեց մինչև 12 տարեկան տղաների աշխարհի առաջնության ընտրական մրցումներին: Իր տարիքային խմբում ցույց տալով լավագույն արդյունքը, նա ոչ միայն նվաճեց հատուկ մրցանակ՝ բյուրեղապակյա գավաթ, այլ նաև լրացրեց վարպետության թեկնածուի նորման: Կարենի խաղին հետևած մարզիչներն ու մրցավարները չէին թաքցնում իրենց հիացական կարծիքները:

Ահա թե ինչ է գրել միջազգային մրցավար Ա. Դեուելը. «Սովորաբար այդ տարիքում ավելի շատ տեղ են տալիս կոմբինացիոն խաղին, զոհաբերում են, գրոհում, իսկ նա դավանում է դասական շախմատը, պատրաստ է նույնիսկ գրոհի հեռանկարներով դիրքում փոխանակել թագուհիները, «մերկ» տեխնիկայով գերազանցել մրցակցին»:

Շախմատային լուրջ ապագա խոստացող երեխային անմիջապես հրավիրեցին մասնակցելու նշանավոր մարզիչ Դվորեցկու և հանրահայտ գրոսմայստեր Յուսուպովի մարզական վարպետության կատարելագործման դպրոցի հավաքներին, որոնք կայացան Դաուգավպիլս քաղաքում: Հասկանալի է, որ նման դպրոցի պարապմունքներին ընդգրկվում են ամենատաղանդավոր և հեռանկարային երեխաները:

Բայց, անշուշտ, Կարենի մշտական և լավագույն մարզիչը հայրն է՝ մաթեմատիկայի ուսուցիչ Արարատ Ասրյանը: Նա ինքնամոռաց նվիրումով հետևում է որդու շախմատային աճին, մեծ ուշադրություն հատկացնելով նաև հոգեբանական և ֆիզիկական պատրաստականությանը: Կարենը լավ է խաղում ֆուտբոլ, պարտադիր զբաղվում է առավոտյան լիցքային վարժություններով: Սովորում է Երևանի 171 դպրոցի 6-րդ դասարանում և ուսման գերազանցիկ է:

Շատ խորհրդանշական է, որ Կարենը ծնվել է ապրիլի 24-ին՝ Մեծ եղեռնի հիշատակի օրը: Պատանու երկրպագուները համոզված են, որ դա նրա շախմատային փայլուն ապագայի առհավատչյան է: Մենք էլ մեծ հույսով ու հավատով շնորհալի հայ պատանուն մաղթենք բարձր պահել ազգային դրոշի պատիվը հունիսին Հունգարիայի Սոմբատհելի քաղաքում կայանալիք մինչև 14 տարեկանների Եվրոպայի առաջնությունում, իսկ այնուհետև Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայում՝ մինչև 16 տարեկանների աշխարհի առաջնությունում:

ԽԱՉԻԿ ԱՐԾՐՈՒՆԻ